

կութիւնք նորին ի վերայ իբրու կործանեալ փրեալ կարծես՝ եւ գառն ու լեզի կենօք աշխարէ :

Այսուհետեւ եւ դուք զնա մխլթարել ջանացէք, եւ Քրիստոսն ամենակալ ամենափրկիչ մխլթարելով զձեզ՝ փրկեսցէ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամոյն, որ է զէն հին եւ մեծանդամ եւ միշտ մեզ դարանակալ, զոր սաստեսցէ աջն անեղական եւ զձեզ եւ զմեզ եւ զամենայն հաւատացեալս պահեսցէ ի խնամս մարդասիրութեան իւրոյ :

(Ձեռ. Թիւ 1059, քղ. 65բ-67ա)

### (Առ վարդապետ ոմն)

Զհուչակութիւն իմաստասիրութեանդ իմաստակիր իմաստնոյ ոչ միայն այլ եւ ըստ ժամանակիս դասասից եւ աշակերտելոց գերազանց տէլէտքն զէլլէնացւոց բառացի ճոխութեամբ հրատարակիւր ի պարծանս՝ տի եւս զքաղաքավարիլ առաքինութեամբդ ընդ ամենայնի ամենայն անդատին զարդարեալ՝ եւեթ յընդհանուրս գովարանիսդ ի սեւագլուխս, թո՛ղ թէ եւ այր ի նամակէ ճանաչիլն ի նախնեաց աւանդ ընկալեալ : Որպէս Սողոմոնն այն ամէնիմաստիւք տոչորէր զսիրտ չտեսողաց զինքն, եւ սակս անկար ի տեսութեան՝ այնր աղազաւ զարմացմամբ աշխարհակալքն լսողք եւ տեսողք զնամակ նորին իւրաքանչիւրք աղերսէին : Ոչ միայն զարծաթ եւ զոսկի եւ զականս պատուականս՝ այլ եւ զքեռից եւ զգստերաց յուղարկելն ինա սըրտիւք զովանային, թէպէտեւ կերպիւ ինչ տակալին : Այլ զի եւ ոչ գոյոյ ի ժամանակիս իշխան, մարգարէ եւ առաջնորդ, ըստ ասից Գրոց՝ Բարձից ի ձէնջ